ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ
ՄԱՀՎԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Հայ նոր գրականության ու մանկավարժության հիմնադիր, մեծ լուսավորիչ-դեմոկրատ Խ. Աբովյանի մահվան 100-ամյակի առթիվ հրատարակվող ներկա ժողովածուն՝ Ինստիտուտի «Գրական բանասիրական հետազոտություններ»-ի երրորդ գիրքը ամբողջովին նվիրված է մեծ լուսավորչի բազմահարուստ կյանքին ու գործունեության։ Նախընթաց ամբողջ 100-ամյակի ընթացքում բազմաթիվ հոդվածներ ու մի շարք մենագրություններ են նվիրված Աբովյանին, բայց այս բնույթի քննադատական-տեսական ու բանասիրական հետազոտությունների ժողովածու չի եղել։

Հարկ է նկատել, սակայն, որ ժողովածվում տեղավորված հոդվածների ոչ բոլոր դրույթներն են անառարկելի։ Կան դրույթներ, (օր. ընկ. ընկ. Դ. Դեմիրճյանի, Մ. Սանթրոսյանի և այլ հոդվածներում), որոնք աբովյանագիտության չուսումնասիրված ու դեռ քննության ենթակա պրոբլեմներից են, և որոնց պետք է անդրադառնա մեր գրականագիտությունը հետագայում։ Ժողովածուն պատրաստելիս Ինստիտուտն առաջադրել է ընդգրկելու Աբովյանի կյանքի ու գործունեության, նրա մեծ ժառանգության ոչ բոլոր, այլ մի քանի հիմնական հարցերի լուսաբանությունը։

Ինստիտուտը ներկա ժողովածուն դիտում է իբրև իր գիտական կոլեկտիվի առաջին փորձ՝ Աբովյանի գործունեությունը և նրա թողած ժառանգությունը մարքս-լենինյան թեորիայի լույսի տակ քննության առնելու և գնահատելու ուղղությամբ։

Ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքում հետագայում ևս իր արժանի տեղն է գրավելու՝ ինչպես Աբովյանի գրական ժառանգության գիտական հրատարակությունը, նույնպես և այդ ժառանգության բազմակողմանի ուսումնասիրությունը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ